

— Սիսից Պատրիարքին հեռագրել են, որ Կիւրինի կաթողիկոսական տեղապահ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեանը ապրելի 1-ին վախճանուել է:

Հանգուցեալը ծնուած էր Մալկարա 1835-ին և Վարդան անունով վարդապետ ձեռնադրուած 1864-ին: Նախապէս Երուսաղէմի Պարան եղած և Կիպրոսի հոյեոր տեսչի պաշտօն է վարած: Ապա թողնելով Երուսաղէմի միաբանութիւնը, անդամակցած է Սոսյ և Մկրտիչ կաթողիկոսից եպիսկոպոս ձեռնադրուած: Հանգուցեալը վարել է Եօզղատի տեղապահութեան պաշտօնը, գնացած է Պօլիս և Թոփգափու և Սամաթիոյ ձէնի Մահալէի քարոզչութեան պաշտօն է վարել, ինչպէս և եպիսկոպոս ժամանակ, Պօլիս դալով, եղած է Գումգափուի քարոզիչ, Տ. Աբրահամ եպիսկոպոսը 1895-ին կրօնական ժողովի որոշմամբ՝ Գաղանձեան և Նիկողայոս եպիսկոպոսներն ու մի կարգաւոյժ վարդապետի հետ զրկուած էր եկեղեցական պաշտօն վարելու արտօնութիւնից, որից յետոյ իւր միւս ընկերները մեղայական տալով, կրկին ընդունած էին եկեղեցու մէջ, իսկ հանգուցեալը յամառեցաւ և 6—7 տարի պատարագելու իրաւունքից զուրկ մնաց: Արժանատիով Կիլիկիոյ ներկայ Կաթողիկոսի կողմից ներման, նշանակուեց Կիւրինի կաթողիկոսական տեղապահ, որտեղ և մեռաւ կարճ պաշտօնավարութիւնից յետոյ:

## ԱՅԼ ԵԿԵՂԵՅՒՆՆԵՐ

Церк. Вѣстникъ-ի № 13-ում կարգում ենք Ս. Պետերբուրգի հոգևոր ձեմարանի տեսուչ Սերգիի եպիսկոպոսի հետևեալ տողերը.—

Ներկայումս զրուած և կարելի է ասել, որ արդէն վճռուած է խղճի ազատութեան վերաբերեալ հարցը: Այսուհետև Ռուսաստանի հպատակ և քաղաքացիապէս չափահաս իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի ոչ միայն անտարբեր լինելու գէպի հաւատն ու նրա համար ընական պրաւօտլաւ եկեղեցու կանոնները, այլ և պաշտօնապէս անցնելու իւր դաւանութիւնից մի ուրիշը (առ այժմս կարծեմ թոյլ է տրուած փոխուել մի միայն քրիստոնէական մի դաւանութիւնից միւսը, որպիսի սահմանափակումն անշուշտ կը վերացուի ապագայում՝ որպէս անհետևողական):

Սրբազանը՝ նկարագրելով անհամբերողութեան հակաքրիստոնէականութիւնն ու նրա վնասակարութիւնը եկեղեցու համար, ասում է. —

«Եկեղեցին իւր իսկ էութեամբ շատ քացառիկ է: Բայց հէնց այդ քացառիկ դրութեան մէջն է գլխաւոր դրաւականը, որ եկեղեցին սկզբունքով միշտ կողմնակից կլինի համբերատարութեան կամ խղճի ազատութեան: Գատապարտելով ամենայն միջին ճանապարհ, եկեղեցին չի կարող թոյլ տալ, որ առանց խոր համոզման՝ մի միայն կեղծաւորութեամբ ընդունեն նրա վարդապետութիւնը. չի կարող թոյլ տալ, որ հողուոյ խորքում առանց եկեղեցական հաւատ ունենալու, առանց եկեղեցու կեանքովն ապրելու, այնուամենայնիւ մարդիկ եկեղեցու անդամ համարուին: Այդպէս արտաքուստ միայն եկեղեցուն պատկանելիք՝ առանց խորին համոզման՝ իսկապէս ամենամեծ զիջողութիւն կլինի և եկեղեցու մէջ աւելի կռապաշտութիւն և ընդհանրապէս հակաքրիստոնէութիւն կը մտցնի, քան յայտնի ազանդը և աւելի վնասակար կլինի եկեղեցու ամբողջութեան համար, քան ազանդաւորութիւնը: Եկեղեցու համար լաւն այն է, որ պարզ լինի, թէ ով ինչ հաւատի է պատկանում, քան թէ լցնել ցուցակներն այնպիսիների անուններով, որոնք ներքուստ այդ հաւատոյ հետ ոչ մի կապ չունին: Աստուած ուսուցանում էր ճանաչել Իրեն և ոչ թէ ստիպում: Նրա հրաշալի երկնային գործերն էին, որ մարդկանց արամադրեցին ճանաչել վեհ հեղինակաւորութիւնը: Եթէ անգամ ըռնի միջոցները յօգուտ ճշմարիտ հաւատոյ գործադրուին, այդ դէպքումն էլ եպիսկոպոսները հանդէս կը գային նրա դէմ և իրենց վարդապետական խօսքով կասէին. — Աստուած — Տէր է տիեզերաց. Նա ըռնի ծառայութիւն չի ուզում, Նա չի ցանկանում, որ Իրեն խոստովանեն ըռնազբօսիկ կերպով:

— Ո՞ր քրիստոնեան երկու ձեռքով չի ստորագրել այս մարգարտաշար խօսքերի տակ: Սակայն ինչպէս եպիսկոպոսների, այնպէս էլ բախտախնդիր քահանաների մէջ ո՞րքան մոլորուած մարդիկ ենք տեսել, որոնք կեղծ ու պատիր խօստումներով աշխատել են օգտուել ժողովրդի տականքների աղքատութիւնից և տղիտութիւնից և աշխատել ձիթել նրանց ճակատը, փոխելով նրանց անունները և ըռնի վրաժախելով անհատկանալի աղօթքն ու հաւատը: Ո՞ր է թող շուտ ծագի խղճի ազատութեան լիակատար արշալոյսը և վերացնի տղիտութեան և ծխականութեան կապանքները հաւատացեալների հոգուց ու մտքից, որից յետոյ միայն ազատ պայմաններում կարող է ծագիլ ճշմարիտ քրիստոնէութիւնը և կրկապուի բախտախնդիր

նշանապատշաճների առաջ խաւարի շնորհիւ ստեղծուած լայնարձակ ասպարէզը:

## Ճեմարսութիւնը Վրաց եկեղեցու մասին

### ՊՐՕՖ. ՄԱՌԻ

Յնօքիս Փուրցելիի № 2796 և 2797-ուժ տպուած է ուսուցչապետ Մառի հետաքրքիր նամակը Պետերբուրգ գնացած Դիմիտրի Եպիսկոպոսի՝ Մինգրելիայի առաջնորդի տուած պատասխանի առթիւ ն. Գուրնովոյին: Վերջինս տպել էր մի նամակ «Վրաց եկեղեցու դէմ յարուցած հալածանքի ուժեղացումը» վերնագրով, որով ի միջի այլոց մեղադրում էր և Դիմիտրի Եպիսկոպոսին: Ահա այդ մեղադրանքից պաշտպանուելու համար Մինգրելիայի առաջնորդը գրեց իւր պատասխանը, որով արդարանալ չքիւրոզանալուց զատ, առիթ տուաւ ընդհանուր դժգո՞ւթեան և այդ նամակին էլ կէտ առ կէտ պատասխանում է յարգելի ուսուցչապետը:

«Այս բոպէյիս «РАЗВѢТЪ» թերթում կարդացի ն. Գուրնովոյի «Վրաց եկեղեցու դէմ մղած հալածանքի սասկացումը» յօդուածի դէմ տպուած պատասխանը: Նա գրուած է Գուրիա-Մինգրելիայի առաջնորդ Դիմիտրի Եպիսկոպոսի կողմից: Նս հաւատացած եմ, որ սրբազանի երկդիմի բառերն ու Ֆրաղները միայն ինձ չեն զայրացրել ու զարմացրել: Ռուս հատարակութիւնը, որը սարաբազդարար շատ քիչ է ճանաչում կովկասեան գործերը, իրաւունք ունէր սպասելու, որ սրբազանի բացատրութիւնն ու պատասխանը աւելի խաղաղ ոճով գրուած կլինէր... բայց Դիմիտրի Եպիսկոպոսի նամակն աւելի ցաւալի և զայրոյթ առաջ բերող տպաւորութիւն է թողնում իւր բովանդակութեամբ և գրութեան հանդամանքներով: Քրիստոնէական հնադոյն եկեղեցիներից մինը հասցրած է բարոյական կատարեալ քայքայման. նա անօգնական ընկած է ճանապարհին, տեղական անտէրութեան շնորհիւ ծածկուած է վէրքերով և քայքայում է վիրաւոր, կողոպտուած և սրատառտած: Հարազատ սրդիք խորթացել են, այնպէս են մեծացել, որ նրա մասին սչինչ չեն լսել և պատրաստ են ոտնակոխ անել, կրակ տալ և ոչնչացնել նրա այն հովիւներին, որոնք ատելի են դարձել իրենց համար: Միայն թոյլ հառաչն է, որ դեռ վիայում է նրա մարող կենդանութեան մասին: Վրաց եկեղեցուն այն արին, ինչ որ չէին արել քրիստոնէութեան ամենադաժան թշնամիք՝ Հաղկերար, Լանգթամուրը և Նահա-